ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թ-ի հունիսի 4-ից 6-ը Բելգիա, Բրյուսել

գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը

Սիմոն Սիմոնյան- Անձնական տվյալների պաշտպանության գործակալության վարչական վարույթների իրականացման բաժնի գլխավոր իրավաբան

Արմենուհի Բաբախանյան-Անձնական տվյալների պաշտպանության գործակալության ռեեստրի վարման և մոնիթորինգի բաժնի մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Բելգիա, Բրյուսել, 2024 թվականի հունիսի 4-ից 6-ը

3. Հրավիրող կողմը

Գերմանական համագործակցության հիմնադրամ (GIZ)

4. Գործուղման նպատակը

«Արևելյան գործընկերության երկրներում պետական կառավարման բարեփոխումների շրջանակներում լավ կառավարման խթանումը» խորագրով փորձի փոխանակման միջոցառում, որի հիմնական նպատակն է նպաստել Արևելյան գործընկերության երկրների միջև լավ կառավարման թեմայի վերաբերյալ գործնական, մասնագիտական մակարդակով երկխոսության ծավալմանը՝ օգտագործելով հանրային լառավարման վերանայված սկզբունքները:

5. Քննարկման թեմաները

Արևելյան գործընկերության 4 երկրների՝ Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի կառավորությունների և խորհրդարանական վարչակազմերի ներկայացուցիչների, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի, ՏՀԶԿ (OECD) SIGMA-ի, Գերմանիայի համագործակցության հիմնադրամի խորհրդատուների միջև քննարկումներ են ծավալվել «Հանրային կառավարման բարեփոխումների ոլորտում լավ կառավարում խթանելու» թեմայի շուրջ:

6. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները

Մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու ներկայացված երկրների փորձին, հանրային կառավարման բնագավառում գրանցած հաջողություններին և առկա մարտահրավերներին: Հանդիպումների ընթացքում ձեռք բերված կապերի և փորձի

փոխանակման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց առավել սերտորեն համագործակցել միմյանց հետ:

Մոլդովայի Հանրապետության անձնական տվյալների պաշտպանության ազգային կենտրոնի ներկայացուցիչների հետ ձեռք բերվեց նախնական պայմանավորվածություն Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության և Մոլդովայի Հանրապետության անձնական տվյալների պաշտպանության ազգային կենտրոնի միջև Համագործակցության հուշագրի կնքման վերաբերյալ:

8.Գործուղվողը (ները)

Սիմոն Բաբայան

Արմենուհի Բաբախանյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը

/Ա. Բաբայան/

/Ա. Բաբախանյան/

11.06.2024 թ.